



ԻՆՉՊԵՏ ԱՐՁԱՉԱՆՁԵԼ ԵՐԵՒԱՆԻ ԱՉՐԵՍԻՎ ՎԱՐՁԻՆ ԴՊՐՈՅՈՒՄ

Դպրոցում գրեթե ամեն դասարանում կան երեխաներ, ովքեր վիրավորում, հարվածում, սպառնում են հասակակիցներին, կիրառում անթույլատրելի բառեր և արտահայտություններ: Իրենք բնորոշվում են որպես ագրեսիվ վարքային դրսևորումներ ունեցող երեխաներ: Ագրեսիվ են համարվում այն երեխաները, ովքեր երկարատև ժամանակահատվածի ընթացքում (ճամփա և ավել) հաճախ (շաբաթական 1-2 անգամ)

- ունենում են բարկության դրսևորումներ,
- վիճում են հասակակիցների և մեծահասակների հետ,
- վիրավորում են հասակակիցների և մեծահասակներին,
- վնասում են մյուսների իրերը
- միտումնավոր հրահրում են մյուսներին
- հարվածում են, ծեծում մյուս երեխաներին
- դժվարանում են կառավարել սեփական վաքը:

Ո՞րն է նման վաքի պատճառը, ինչու՞ են երեխաները նման դրսևորումներ ունենում:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈՒՆՎՈՐՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտանեկան անբարենպաստ մթնոլորտը առաջին գործոններից է, որոնք կարող են նպաստել երեխաների մոտ ագրեսիվ վարքային հակազդումներին: Ծնողական դաստիարակման ոճը, մասնավորապես ավտորիտար ոճի կիրառությունը, մեծապես նպաստում են բացասական վարքային դրսևորումներին:



ԾՆՈՐՆԵՐԻ ԵՎ ՌԻՍՈՒՅԻՑՆԵՐԻ ԱՐՁԱՉԱՆՁ ԵՐԵՒԱՆԻ ԸՎՐԿՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ

Երեխաները դառնում են ագրեսիվ՝ ի պատասխան մեծահասակների ագրեսիվ դրսևորումներին կամ նրանց անտարբերությանը



ՄԵԾԱՄՍԿԱՆ ՓՈՒՆՎՈՐՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒՄ

Երեխաների վարքային դրսևորումները հաճախ լինում են մեծահասակների վարքի կրկնություն:



ՀՎՈՐՈՎԱԿՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱԿԱՄ

Ունենալով շփման սահմանափակ հնարավորություններ՝ երեխաները հաճախ նախընտրում են որպես խաղի տարբերակ ագրեսիվ կամ ստիպողական վարքային դրսևորումները:




ՌԻՇԱՎՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՄ

Ագրեսիվ վարքագիծը երեխաների համար լինում է այն տարբերակը, որով նա կարողանում է գրավել թե՛ հասակակիցների, թե՛ մեծահասակների ուշադրությունն իր անձի հանդեպ, քանի որ նման վարքագիծը մեծ հավանականությամբ միանգամից լինում է բոլորի ուշադրության կենտրոնում:



ԹԵՐԱՐՇԵՐՈՒԹՅԱՆ ԸՎՐՈՒՅԹ

Ագրեսիվ վարքային դրսևորումները երեխաների համար լավագույն միջոցներից են համարվում հասակակիցների շրջանում իրենց որևէ խնդիր քոլարկելու համար, քանի որ նման վարքագիծը հնարավորություն է տալիս քիչ կենրոնանալ իրենց համար թերաթժեք կողմերի վրա:





Ազդեցիկ վարքային դրսևորումներն արդյունավետ հաղթահարելու համար անհրաժեշտ է դրանց ցուցաբերել համալիր և ամբողջական մոտեցում: Շատ կարևոր է դպրոցի հոգեբանի և մանկավարժական անձնակազմի միջև սերտ համագործակցությունը: Ստորև նշվում են մի քանի կետեր, որոնց կիրառությունը հնարավորություն կտա նվազեցնել ազդեցիկ վարքագիծը:

1. **Աշխատել ոչ միայն ազդեցիկ երեխայի հետ, այլ նաև դասարանի բոլոր երեխաների հետ:** Եթե բացառելք ազդեցիկ երեխայի դասարանի հետ աշխատանքը, ապա նա կհայտնվի մեկուսացված և մերժված վիճակում, ինչ էլ ավելի կսրի նրա մոտ բացասական դրսևորումները: Այս դեպքում նույնիսկ, երբ երեխան սովորի կառավարել իր վարքային դրսևորումներն ու հույզերը, նա կունենա դժվարություններ հասակակիցների հետ շփվելիս:
2. **Լինել համբերատար:** Ազդեցիկ վարքի շտկումը կարող է տևել ամիսներ: Ընդ որում՝ նման դեպքում կարևոր է հաշվի առնել, որ շտկողական աշխատանքների սկզբում երեխայի վարքն ավելի կարող է վատանալ, որից հետո նոր սկսել կարգավորվել:
3. **Ունենալ դրական վերաբերմունք ազդեցիկ երեխայի նկատմամբ:** Ինչպես նշեցինք վերևում, ազդեցիկ երեխաները հաճախ ունենում են դժվարություններ և սիրո ու կարեկցանքի կարքի տանը: Հետևապես կրթական միջավայրում, երեխան պետք է ունենա հնարավորություն սիրված և ընդունված լինելու: Երեխայի դրական կողմերի մատնանշումը, հնարավորություն կտա հասակակիցներին ևս տեսնել այդ դրական կողմերը և կառաջացնի ցանկություն իր հետ շփվելու: Կարևոր է հաճախակի խրախուսել երեխային, ներառել արտադասարանական

ակտիվություններում, տալ տարբեր դերեր դասարանական տարբեր գործունեությունների հետ կապված:

4. **Սովորեցնել ազդեցիկ երեխաներին կառավարել սեփական հույզերը:** Այս նպատակով շատ կարևոր է երեխայի համար ստեղծել ապահով միջավայր, որտեղ նա կունենան հնարավորություն արտահայտելու իր բարկությունը: Ապա երեխայի հետ միասին փորձարկել բարկությունն արտահայտելու այլընտրանքային, ավելի ընդունելի տարբերակները: Օրինակ՝ «Դու միշտ կարող ես ուղիղ ասել, թե ինչն է քեզ բարկացնում», «Խոսքը կարող ես սկսել «Ինձ շատ է բարկացնում, երբ...» արտահայտությամբ», «Հաշվիր մինչև 10, 5 անգամ խորը շնչիր, ապա արձագանքիր», «Երբ շատ ուզում ես բղավել, կարող ես դուրս գալ միջանցք կամ հոգեբանի սենյակ գալ», «Երբ շատ ուզում ես հարվածել, կարող ես մի քանի անգամ հարվածել բարձին կամ բոքսի տանձիկին»: Բացի նշված տարբերակներից, երեխային կարելի է առաջարկել տարբերակներ, որոնք ելնում են իր անհատական առանձնահատկություններից և հետաքրքրություններից:
 5. **Սովորեցնել ազդեցիկ երեխային հասկանալ դիմացինի հույզերը:** Չհասկանալով դիմացինի հուզական վիճակը, ունենալով դժվար սեփական հուզական վիճակ՝ երեխաները հաճախ տալիս են ոչ համապատասխան արձագանք, ինչ էլ իր հերթին հանգեցնում է կոնֆլիկտների:
- Այս նպատակով կարելի է
- օգտագործել սյուժետային նկարներ, որտեղ արտացոլված կլինեն տարբեր հույզեր կամ իրավիճակներ, որոնք տարբեր հուզական արձագանք են ենթադրում:



- կարդալ և քննարկել պատմություններ և հեքիաթներ, որտեղ հերոսներն ունենում են տարբեր հուզական ապրումներ:
- նկարել հույզերի թեմայով:

Ընդ որում, նման աշխատանքներ հնարավոր է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբային՝ ամբողջ դասարանի հետ:

6. Ձևավորել ապրումակցման կարողությունն ագրեսիվ երեխայի մոտ:

Քանի որ շատ երկար ժամանակ ագրեսիվ երեխաները ստանում են բացասական վերաբերմունք շրջապատի կողմից, նրանց դժվար է լինում դրական արձագանք տալ մյուսներին: Այս նպատակով երեխաների հետ կարելի է իրականացնել դերային խաղեր, խաղասեսյակում խաղարկել տարբեր իրավիճակներ, սկզբնական փուլում իրականացնել անհատական, ապա զույգերով և փոքր խմբերով աշխատանքներ:

7. Սովորեցնել ագրեսիվ երեխային նվազեցնել հուզական լարվածությունը մկանային ռելաքսացիայի և շնչառական վարժությունների միջոցով միջոցով:

